

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 28.02.2020թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 40 (քառասուն) անդամից՝ 32-ը (երեսուներկու),

Նիստին մասնակցում էին՝

1. Սերոբյան Երվանդ Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ
2. Ավետիսյան Նազելի Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
3. Նիկողոսյան Գագին ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
4. Մելքոնյան Հովիկ Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
5. Սարգսյան Արմենուհի Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն
6. Խաչատրյան Թերեզա Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն
7. Պետրոսյան Կոռնինե Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)
8. Մելիքյան Թամառ Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ղեկան
9. Հովհաննիսյան Օֆելյա Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի ղեկան
10. Մարդոյան Ռուզաննա Մանկավարժության ֆակուլտետի ղեկան
11. Մկրտչյան Արթուր Ռազմական ամբիոնի պետ
12. Այվազյան Կարինե ՇՊՀ քոլեջի տնօրեն
13. Դարբինյան Կարեն ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն
14. Խաչատրյան Վալենտինա ՇՊՀ արհմիության նախագահ
15. Սողոյան Մուստուրուհի Մ.գ.դ, պրոֆեսոր, (անենաերիտասարդ դոկտոր)

- | | | |
|-----|-----------------------|--|
| 16. | Մկոյան Արտաշես | Մ.գ.դ, պրոֆեսոր, (անենատարեց դոկտոր) |
| 17. | Սարգսյան Սամվել | ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր |
| 18. | Մկրտչյան Արթուր | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ |
| 19. | Ղուկասյան Լուսիկ | Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ |
| 20. | Աղանյան Գևորգ | Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ |
| 21. | Հովհաննիսյան Արտակ | Մոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ |
| 22. | Սահակյան Կարինե | Մոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ |
| 23. | Հայրապետյան Սերգո | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր |
| 24. | Կուրազյան Օֆելյա | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ |
| 25. | Տեր-Աղամյան Շուշան | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ |
| 26. | Մաթևոսյան Էվելինա | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ |
| 27. | Համբարյան Ժենյա | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի |
| 28. | Հովհաննիսյան Յուլյանա | Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի |
| 29. | Ամիրխանյան Անուշ | Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի թարգմանչական գործ՝ անգլերեն և ռուսերեն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի |

30. Քոչարյան
Անահիտ Մանկավարժության ֆակուլտետի տարրական
մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 4-րդ կուրսի
ուսանողուհի
31. Խաչատրյան
Կարեն Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական
դաստիարակություն և սպորտային մարզումներ
մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող
32. Սարգսյան
Սվետլանա Ռազմական ամբիոնի նախնական զինվորական
պատրաստություն մասնագիտության 3-րդ կուրսի
ուսանողուհի

ՕՐԱԿԱՐԳ

1. Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի 2018-2019 ուստարվա հաշվետվության մասին

Հաղ.՝ Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝ Թ. Մելիքյան

2. Մանկավարժության ֆակուլտետի 2018-2019 ուստարվա հաշվետվության մասին

Հաղ.՝ Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝ Ռ. Մարդոյան

3. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի 2018-2019 ուստարվա հաշվետվության մասին

Հաղ.՝ Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝ ՕՖ. Հովհաննիսյան

4. Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի 2018-2019 ուստարվա հաշվետվության մասին

Հաղ.՝ Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան՝ Բ. Պողոսյան

5. Ռազմական ամբիոնի 2018-2019 ուստարվա հաշվետվության մասին

Հաղ.՝ Ռազմական ամբիոնի պետ, գնդապետ՝ Ա. Մկրտչյան

1. ԼՍԵՑԻՆ՝

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի 2018-2019 ուստարվա հաշվետվության մասին

Պարոն Սերոբյանն առաջարկեց հաշվետվությունների համար սահմանել 15 բույս ժամանակահատված, հատկապես, որ գիտական խորհրդի անդամներին էլեկտրոնային տարբերակով նախօրոք ուղարկվել են օրակարգում ընդգրկված բոլոր հաշվետվությունները:

Պարոն Սերոբյանի առաջարկը դրվեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32 անդամ. կողմ՝ 32 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Տիկին Մելիքյանը հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի 2018-2019 ուստարվա հաշվետվությունը ներկայացրեց օգտվելով սահիկահանդեսից:

Տիկին Մելիքյանը ներկայացրեց, որ հաշվետու շրջանում կրթական գործընթացը կազմակերպվել է ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի պլանավորման, կազմակերպման, կրթական չափորոշիչներին համահունչ որակի ներքին ապահովման համակարգի ստեղծման, բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում կրեդիտային համակարգի իրականացման, դասավանդման և ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի բարելավման ուղղություններով:

Հաշվետվության «Կառավարում եվ վարչարարություն» բաժնում ներկայացվեց ֆակուլտետի խորհրդի կազմը, ֆակուլտետի կառուցվածքը, ՊԴ կազմը՝ ըստ աստիճանների և կոչումների՝ նշելով, որ միայն «Լրագրություն» բաժնում է, որ դասախոսական համակազմում գիտական աստիճան ունեցողները փոքր թիվ են կազմում, որն էլ իր կարծիքով օբյեկտիվ է: «Մասնագիտության կրթական ծրագրեր» բաժնում զեկուցողը ներկայացվեց ընդունելության ցուցանիշներն՝ ըստ կրթական ծրագրերի, 2018-2019 ուստարվա քննաշրջանի արդյունքները /առկա բակալավրիատ, մագիստրատուրա, հեռակա բակալավրիատ/ուսանողների առաջադիմության վերլուծությունն ըստ կրթական ծրագրերի: Տիկին Մելիքյանն այս բաժինը ներկայացնելիս առանձնապես ուշադրություն հրավիրեց «Կիրառական արվեստ» բաժնում սովորող ուսանողների քննաշրջանի արդյունքների վրա՝ նշելով, որ քննաթերթիկները ստորագրելիս աչքի են զարնում, որ համարյա բոլոր ուսանողների ՄՈԳ-երը 88-ից բարձր են և շարունակեց, որ ստուգումների ժամանակ էլ իր կողմից նկատվել է նույնը, իր կարծիքով դասախոսների անպատասխանատու վերաբերմունքի արդյունք է սա, երբ ամբողջ կուրսում հավասար գնահատականներ են նշանակվում և այս ամենը կարծես արվեստի բաժնի դասախոսների մոտ սովորության է վերածվել, ապա շարունակեց, ինքը հասկանում է, որ արվեստի հետ կապված մարդիկ զգացմունքային են, սակայն իր կարծիքով նման բան չի կարող լինել, որ կուրսի բոլոր ուսանողները տվյալ ստուգման արդյունքում ցուցաբերեն միևնույն արդյունքները, ուստի այստեղ իրենք մտորելու տեղ ունեն:

Այնուհետև նշվեց 2018-2019 ուստարվա 1-ին կիսամյակի բուհ-ի կողմից տրված ֆակուլտետի ուսանողների ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման մասին և առկա և հեռակա կրթական ծրագրերով սովորող ուսանողների պարագայում:

Ներկայացվեց ուսանողների մանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների, կուրսային աշխատանքների, մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների և դրանց հետ կապված խնդիրների վերլուծությունները:

Հաշվետվության վերջին բաժնում տիկին Մելիքյանն անդրադարձավ ֆակուլտետի և այլ համալսարանների ու գիտահետազոտական հաստատությունների համապատասխան բաժինների հետ իրենց համագործակցությանը, առանձնապես անդրադառնալով ՌԴ-ի բուհերի հետ սերտ համագործակցային գործընթացներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Օֆ. Կուրազյանը, ով նշեց, որ ինքն ուզում է պարզաբանում մտցնել տիկին Մելիքյանի կողմից առաջ քաշած այն հարցին, որ արվեստի բաժնում բոլոր ուսանողների ՄՈԳ-երը բարձր են լինում և համարյա նույնանման գնահատականներ են նրանք ստանում ստուգումների արդյունքում:

Տիկին Կուրազյանը նշեց, որ խոսքը այն մագիստրոսների մասին է, ովքեր բակալավրում գերազանց ուսանողներ են եղել, ապա շարունակեց, որ այս տարի դժվար նման արդյունք գրանցվի:

Պարոն Սերոբյանը նշեց, որ հաշվետվությունից երևում է, որ ֆակուլտետում ՊԴ համակազմի առումով որոշ ամբիոններում 25-30 տոկոսն են գիտական աստիճան ունեցողներ, որն էլ իր կարծիքով ցածր ցուցանիշ է, հատկապես բուհի հավատարմագրման ներկա ժամանակաշրջանում, ընդհանրապես այն պետք է լինի 50-60 տոկոսի սահմաններում: Պարոն Սերոբյանը ասաց, որ այս հարցին լուրջ ուշադրություն է պետք դարձնել և խոսքն ուղղելով ամբիոնների վարիչներին, նշեց, որ կոչ է անում նաև ամբիոնի մասնագետների երիտասարդացման հարցին նույնպես հատուկ տեղ տալ:

Նա խոսեց նաև արհեստական ստեղծված ավարտական կարմիր վկայականների և 100միավորանոց ՄՈԳ-երի մասին:

Տիկին Մելիքյանը ներկայացրեց որոշման նախագիծը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի 2018-2019 ուստարվա հաշվետվությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32 անդամ. կողմ՝ 32 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

Մանկավարժության ֆակուլտետի 2018-2019 ուստարվա հաշվետվության մասին

Տիկին Մարդոյանը հաշվետվությունը ներկայացրեց սահիկահանդեսի միջոցով:

Տիկին Մարդոյանը ներկայացրեց, որ հաշվետու ժամանակաշրջանում մանկավարժության ֆակուլտետը կրթական գործընթացը կազմակերպել է ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի պլանավորման, կազմակերպման, ըստ որակի ապահովման պահանջների համատեքստում:

Զեկուցողը ներկայացրեց, որ ֆակուլտետը իրականացնում է մասնագիտական, կազմակերպչական, գիտահետազոտական, հոգեբանա-խորհրդատվական, կրթական, մեթոդական, մշակութային գործունեություն:

Ֆակուլտետի կառավարման ու վարչարարության, կրթական ծրագրերի մասին խոսելիս, տիկին Մարդոյանը ներկայացրեց, որ այս տարի իրենք երկու նոր մասնագիտություններ են բացում. «Լոգոպեդիա» և «Հատուկ մանկավարժություն», որոնք Շիրակի մարզում իր կարծիքով այսօր շատ սպասված են և կարևոր նշանակություն ունեն:

Այնուհետև տիկին Մարդոյանի կողմից սալիկահանդեսի միջոցով ներկայացվեցին ֆակուլտետի ՊԴ համակազմի հետ կապված հաշվետվության բոլոր համապատասխան գործընթացները, ուսանողների քննաշրջանի արդյունքները բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա և հեռակա բոլոր կուրսերում: Հատկապես ուշադրություն դարձվեց ֆիզիկական մարզումներ և սպորտի բաժնի ուսանողների համեմատաբար ցածր ՄՈԳ-երի վրա: Տիկին Մարդոյանը նշեց, որ ի տարբերություն մանկավարժություն մասնագիտությամբ սովորող ուսանողների ֆիզկուլտուրայի բաժնում սովորող ուսանողների արդյունքները ցածր են, սակայն նրանք հիմնականում ճանաչված սպորտսմեններ են, որոնք տարբեր երկրներում մասնակցելով հավաքների և մրցումների, երբեմն բացակայում են դասապրոցեսից, չեն հասցնում լավ պատրաստվել ստուգումներին քննաշրջանի ընթացքում, սակայն իրենց սպորտային արդյունքներով պատիվ են բերում ոչ միայն համալսարանին, այլ ամբողջ հանրապետությանը:

Տիկին Մարդոյանը աղյուսակների միջոցով ներկայացրեց հաշվետու ժամանակաշրջանում ուսանողների արդյունքները, խոսեց ֆակուլտետում պրակտիկաների, կուրսային աշխատանքների կազմակերպման աշխատանքներից: Նա նշեց, որ ուսման վարձի փոխհատուցման հարցը ֆակուլտետում քննարկվում է ոչ միայն բուհում գործող համապատասխան հանձնաժողովի, այլ նաև հենց իրենց՝ ուսանողների հետ:

Տիկին Մարդոյանը կուրսային աշխատանքների մասին խոսելիս նշեց, որ այս առումով, ճիշտ է, մասնագիտական ամբիոնների պատասխանատվությունը բարձր է, սակայն երբեմն աշխատանքների թեմաները գլոբալ են և հիմնականում կապված չեն ուսանողների պրակտիկայի ժամանակ նրա կատարած աշխատանքների հետ:

Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների մասին խոսելիս տիկին Մարդոյանը նկատեց, որ ֆիզկուլտուրա բաժնում, իր կարծիքով, պահանջները բարդ են, դրանք կարելի է ավելի մեղմացնել այս մասնագիտությամբ սովորող ուսանողների համար:

Կադրային քաղաքականության մասին խոսելիս տիկին Մարդոյանը նշեց, որ

Ֆակուլտետի ղեկանների թույլ կողմը, իր կարծիքով, շրջանավարտների հետ թույլ կապն է, հետադարձ կապը ամուր չէ, չգիտեն քանիսն են շրջանավարտներից

աշխատում, զեկուցողը շեշտեց, որ սա կարևոր է, կրթական ժրագրերի արդյունավետության մասին կարծիք կազմեն:

Տիկին Մարդոյանը ներկայացրեց ֆակուլտետի գիտամանկավարժական աշխատանքների որակի և արդյունավետության մասին:

Զեկուցման ավարտին տիկին Մարդոյանը ներկայացրեց, որ իր կողմից ներկայացվող հաշվետվությունը թեև կազմվել է գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի կողմից կազմված ձևաչափով, սակայն, իր կարծիքով, ֆակուլտետում կատարված բազում առօրյա աշխատանքներ այստեղից դուրս են մնացել, օրինակ կուրսղեկների աշխատանքը, դասացուցակի հետ կատարված աշխատանքները և այլն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Պարոն Սերոբյանի կողմից հարց ուղղվեց տիկին Մարդոյանին, թե նրա նշած ամբիոնների և շրջանավարտների թույլ կապը ինչով է բացատրում:

Տիկին Մարդոյանը պատասխանեց, որ իր կարծիքով, ֆակուլտետի և ամբիոնների այս հարցի վերաբերյալ թերացմամբ:

Ն. Ավետիսյանի կողմից լրացվեց, որ իր կարծիքով դա այդքան էլ այդպես չէ, քանի որ բակալավրից մագիստրատուրա բավականին շատ ուսանողներ են գալիս և այստեղ գոնե շրջանավարտների հետ կապը կա: Ապա շարունակեց, որ հեռանկարում իրենք ունեցել են այնպիսի ծրագիր, որ ստեղծեն շրջանավարտների ընդհանուր բազա համալսարանում, այն այժմ էլ կարելի է կյանքի կոչել:

Պարոն Սերոբյանը անդրադարձավ տիկին Մարդոյանի զեկուցման ընթացքում հնչեցված որոշ դասընթացների համար հեռավար ուսուցում կազմակերպելու ֆակուլտետի նախաձեռնությանը, նշելով, որ համալսարանը հեռավար ուսուցում կազմակերպելու թույլտվություն չունի, չնայած բարձրագույն կրթության մասին օրենքով այն առաջիկայում նախատեսվում է:

Տիկին Ավետիսյանը դիտարկում կատարեց, որ առանձին կրթական ծրագրերով հեռավար ուսուցում իրականացնելը թույլատրելի է և նշեց, որ տիկին Մարդոյանի ներկայացրածը հենց սրան էր վերաբերվում:

Տիկին Մարդոյանն էլ իր հերթին նշեց, որ իր ներկայացրածը ընդամենը մանկավարժական տեխնոլոգիա է, գուցե արդյունավետ կլինի:

Տիկին Մարդոյանը ներկայացրեց որոշման նախագիծը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Մանկավարժության ֆակուլտետի 2018-2019 ուստարվա հաշվետվությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32անդամ. կողմ՝ 32 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի 2018-2019 ուստարվա հաշվետվության մասին

Տիկին Հովհաննիսյանը հաշվետվությունը ներկայացրեց սալիկահանդեսով:

Նրա կողմից ներկայացվեցին ֆակուլտետի մասնագիտություններին, ՊԴ համակազմին, մասնագիտական ամբիոններին առնչվող գործընթացները: Նշվեց ֆակուլտետում իրավաբանական կլինիկայի, հոգեբանական խորհրդատվության հետ կապված աշխատանքների մասին: Տիկին Հովհաննիսյանի կողմից հաշվետու ժամանակաշրջանում ուսանողների կրթական արդյունքների ներկայացման համար կատարվել էին համեմատություններ 2017-18 ուսումնական տարվա հետ, որոնք աղյուսակներով և համապատասխան վերլուծություններով ներկայացվեց գիտական խորհրդի անդամներին: Ուսումնական տարիների համեմատական վերլուծություններով և համեմատական զուգահեռականներով ներկայացվեց նաև բուհ ընդունված և ավարտած ուսանողների թվաքանակը, նրանց կրթական արդյունքները, առաջադիմությունը :

Զեկուցողը խոսեց նաև ամբիոնների ժամաքանակների, դասախոսների վերապատրաստումների, գիտական աշխատանքների մասին, նշելով, որ հատկապես վերջինիս առումով աչքի է ընկնում պատմության և փիլիսոփայության ամբիոնը:

Տիկին Հովհաննիսյանը անդրադարձավ ֆակուլտետում և ընդհանրապես բուհում ցավալի հարցերից մեկին. մագիստրական կրթական ծրագրով «Զինվորական հոգեբանություն» մասնագիտությանը, որը բուհում չկայացավ, քանի որ իրենք ունեյին թվով 12 ուսանող, սակայն առաջին կուրսում 8 ուսանողներ իրենց դիմումի համաձայն հեռացան բուհից և հոգեբանության ամբիոնը այս առումով աշխատանքներ ունի կատարելու:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ս. Սարգսյանին հետաքրքրում էր, թե զինվորական հոգեբանություն մասնագիտության ուսանողներին ովքեր են դասավանդել:

Տիկին Հովհաննիսյանը ներկայացրեց, որ դասավանդել են հոգեբանության և զինվորական ամբիոնների մասնագետները:

Պարոն Սարգսյանը ասաց, որ դա լրիվ այլ մասնագիտություն է, ինչու են վերոհիշյալ ամբիոնների մասնագետները դասավանդել:

Տիկին Հովհաննիսյանը ըստ առարկաների ներկայացրեց, որ բուհի մասնագետները իրավասու են եղել դասավանդելու այդ առարկաները և ավելացրեց, որ ոչ միայն իրենց, այլ նաև երեվանյան բուհում այս մասնագիտությունը իրեն չարդարացրեց և փակվեց:

Պարոն Սերոբյանը նշեց, որ իր համար զարմանալի է, որ հայոց բանակում այսօր անհրաժեշտ մասնագիտությունը չկայացավ, հատկապես, որ սկզբում 12 ուսանող մագիստրոսներ ունեյին, սակայն մեծ մասը իրենց դիմումի համաձայն հեռացան բուհից:

Կ. Սահակյանը վերոգրյալ հարցի վերաբերյալ հնչեցրեց իր կարծիքը, նշելով, որ ինքը քաջատեղյակ է հարցին, զրուցել է հեռացող բոլոր մագիստրոսների հետ: Նա նշեց, որ և Երևանի պետական համալսարանում, և մանկավարժական համալսարանում, և իրենց բուհում այս մասնագիտությունը փակվեց, քանի որ ուսանողների հեռացումը պայմանավորված էր նրանց նկատմամբ սխալ դիրքորոշմամբ և սխալ հոգածությամբ: Ապա շարունակեց, որ Զինվորական հոգեբանություն մասնագիտությամբ սովորող ուսանողները գտնվում էին զինվորական ծառայության մեջ և հիմնականում ծառայում էին Արցախում, բացի դրանից նրանք ակնկալում էին իրենց վարձավճարի էական փոխհատուցում, որը ոչ մի ձևով չեն ստացել:

Պարոն Սերոբյանը առաջարկեց ֆակուլտետի և ամբիոնի շրջանակներում ուսումնասիրել այս հարցը թե իրավական և թե պահանջվածության տեսանկյունից՝ նշելով, որ եթե Պաշտպանության նաարարությունը հաստիք է հատկացրել բոլոր ուսումնական ու մարտական զորամասերին, որ պետք է մասնագետներով ապահովեն, ապա ինչպես պետք է լուծվի այս հարցը և հարկ է, որ իրենք մոտակա գիտական խորհրդի նիստերից մեկում նորից քննարկեն և հասկանան այս հարցի լուծումը:

Տիկին Հովհաննիսյանը ներկայացրեց որոշման նախագիծը, որի առաջին կետով առաջարկում էր իրավագիտություն մասնագիտության ուսանողների վարձավճարի չափը վերանայել՝ նշելով որ այն պատմություն և հոգեբանություն մասնագիտություններից բավականին բարձր է:

Պարոն Սերոբյանը դիմելով տիկին Հովհաննիսյանին հարցրեց, թե ծանոթ է այլ բուհերում այս մասնագիտության վարձավճարի չափին, ապա նշեց, որ գիտենալով վարձի չափը բավականին դիմորդներ են դիմում այս մասնագիտությամբ: Պարոն Սերոբյանը ապա նշեց, որ իրավագիտություն մասնագիտության վարձավճարի չափը հանրապետության այլ բուհերի հետ համեմատած ամենացածրն է իրենց բուհում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի 2018-2019 ուստարվա հաշվետվությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32 անդամ. կողմ՝ 32 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ՝

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի 2018-2019 ուստարվա հաշվետվության մասին

Պարոն Պողոսյանը իր զեկուցումը ներկայացրեց առանց սալիկահանդեսի, խոսեց ֆակուլտետի կառուցվածքի, մասնագիտական ամբիոնների, ՊԴ համակազմի, ուսանողների թվաքանակի, նրանց առաջադիմության, պրակտիկաների, կուրսային, ավարտական, աշխատանքների, մագիստրոսական թեզերի, ինչպես նաև դասախոսների գիտահետազոտական աշխատանքների և կատարման մասին:

Նա անդրադարձավ ֆակուլտետում մասնագիտությունների փոքր խմբերի առկայության մասին՝ նշելով, որ բնագիտական մասնագիտությունների նկատմամբ դիմորդների հետաքրքրությունը վերջին տարիներին խիստ պակասել է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Պարոն Սերոբյանի կարծիքով բնագիտական մասնագիտությունների առնչությամբ հատուկ քաղաքականություն է պետք իրականացնել:

Պարոն Պողոսյանը ներկայացրեց որոշման նախագիծը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի 2018-2019 ուստարվա հաշվետվությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32 անդամ. կողմ՝ 32 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՍԵՑԻՆ՝

Ռազմական ամբիոնի 2018-2019 ուստարվա հաշվետվության մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ հաշվետվությունը նախօրոք ուղարկվել է գիտական խորհրդի անդամներին, նրանց կողմից դիտարկումներ չեն եղել և եթե այս պահին կան հարցեր գիտական խորհրդի անդամները կարող են ուղղել պարոն Մկրտչյանին:

Հարցեր չհնչեցին, առաջարկվեց, որ պարոն Մկրտչյանը ներկայացնի որոշման նախագիծը:

Պարոն Մկրտչյանը ներկայացրեց որոշման նախագիծը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ռազմական ամբիոնի 2018-2019 ուստարվա հաշվետվությունը գնահատել բավարար և որոշման նախագիծն ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

32 անդամ. կողմ՝ 32 , դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝
Գիտական խորհրդի
քարտուղար՝



Ե. ՍԵՐՈԲՅԱՆ

Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ